ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/10

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6555-2019 գրությամբ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5741 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 03.04.2019թ. թիվ 01/61-5741 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2019թ. թիվ 5 որոշմամբ առաջին տեղն զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն:

Երևան քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Ընկերությունը սահմանված ժամկետում համապատասխան գրությամբ ներկայացրել է եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսեկան հաշվարկներ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 10.03.2019թ. և 12.09.2019թ. դրությամբ տրամադրված տեղեկանքներ և սահմանված ժամկետից ուշ ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված գրություն:

Վերոգրյալով պայմանավորված, ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

3. <u>«Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.04.2019թ. գրությամբ դիմել է «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6555-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է նիստերի օրվա ժամի և վայրի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ 11.03.2019թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/8» ծածկագրով գնման ընթացակարգին:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ;

Սակայն հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն՝ ընկերությունը հայտը ներկայացնելու (11.03.2019թ.) դրությամբ չունի ժամկեանց հարկային որևէ պարտավորություն:

4. <u>ՍՑ-LO-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 11.03.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (11.03.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 157 799 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, ինչով պայմանավորված Ընկերության հայտը մերժվել է:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 11.03.2019թ. դրությամբ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գուամրների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի

տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6555-2019 գրությամբ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նար Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից

հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին

հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ հարկային օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների սպասարկման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները. ... իրական ժամանակում առցանց եղանակով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի (այդ թվում՝ հարկային պարտավորությունների և դրանց մարումների) դիտման հնարավորության ապահովում:

Նույն օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու իր անձնական հաշվի քաղվածքը, որտեղ նշված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն և, ըստ անհրաժեշտության, ընդունվում է այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից գնահատող հանձնաժողովներին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (11.03.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 157 799 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, իրացրել է այն, համոզված լինելով դրա օրինականության և ճշտության մեջ՝ որպես հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն, արտատպելով հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, չէր կարող չունենալ լիարժեք և միևնույն ժամանակ օբյեկտիվ համոզմունք ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա (11.03.2019թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն փատացի Ընկերությունը չի ունեցել, քանի որ հարկ

վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6555-2019 գրությամբ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ